



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

## «Լանթերման-Պետրիս-Շորթի (LPS, Lanterman-Petris Short) օրենքը» հասկանալը

Հրատ.՝ #5608.10

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչև 1967թ. Կալիֆորնիայի հոգեկան առողջության համակարգը ներկա վիճակից շատ տարբեր էր: Հոգեկան առողջությանն առնչվող հաշմանդամություն ունեցող շատ ավելի անձինք ապրում էին նահանգային հիվանդանոցներում և խոշոր հաստատություններում՝ հաճախ իրենց կյանքը երկար ժամանակ այնտեղ անցկացնելով: Այնուհետև Կալիֆորնիան ընդունեց «Լանթերման-Պետրիս-Շորթի օրենքը» (Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք, հոդված 5000 և հետևյալը): Անվանվելով իր հեղինակների անունով՝ նահանգային պետական օրենսդիր մարմնի ստորին պալատի անդամ Ֆրենկ Լանթերմանի և Կալիֆորնիա նահանգի սենատորներ Նիկոլաս Ս. Պետրիսի և Էլրն Շորթի անվամբ, LPS օրենքը նպատակ ուներ «վերջ տալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անհամապատասխան, անորոշ և ակամա պարտադիր բուժմանը»: Այն նաև սահմանեց արագ հոգեբուժական գնահատման և բուժման իրավունքը որոշ դեպքերում, և մանրամասն նկարագրեց հոգեկան առողջության խնդիրներով հաճախորդների պատշաճ իրավական ընթացակարգի պաշտպանության ձևերը:

Սույն հրապարակումն ընդհանուր գծերով նկարագրում է LPS օրենքը հոգեկան առողջության խնդիրներով սպասառուների համար: **Գլուխ 1-ը** նկարագրում է LPS-ի հիվանդանոցում կարճաժամկետ պահելու դրույթները. «5150»-ներ՝ 72 ժամ պահում հիվանդանոցում՝ գնահատման համար, և «5250»-ներ՝ 14 օր պահում հիվանդանոցում՝ ինտենսիվ բուժման համար: **Գլուխ 2-ը** նկարագրում է LPS հաշմանդամ

անձանց խնամակալության գործընթացը, որը կառավարում է բուժումը և «ծանր հաշմանդամ» և ավելի երկար ժամկետով աջակցության կարիք ունեցող անձանց բուժումը՝ երրորդ կողմի որոշում կայացնողների միջոցով: **Գլուխ 3-ն** ընդհանուր գծերով նկարագրում է այն իրավունքները և պաշտպանության ձևերը, որոնք տրվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց LPS-ի հոսպիտալացման դեպքում, և դրանք ինչպես կարող են հարկադրաբար կիրառվել:

LPS-ի օրենսդրական ակտերը և կանոնակարգերը կարող են բարդ լինել: Այս հրապարակումը միայն օրենքի ուղեցույցն է: Ազատությանն առնչվող կարևոր շահերի ներառման պատճառով, սպառողները հիվանդների իրավունքների պաշտպանի ծառայությունների իրավունք ունեն, իսկ որոշ դեպքերում՝ նշանակված փաստաբանի: Եթե Դուք կամ Ձեր սիրելիները LPS-ի վերաբերյալ հարցեր կամ աջակցության կարիք ունեք, կարևոր է որակավորված փաստաբանի կամ պաշտպանի օգնությանը դիմել:

---

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Ջյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (հարավային Կալիֆորնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝*

[http://www.disabilityrightsca.org/  
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).